**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

ք. Երևան «13» «ապրիլի» 2026թ.

# ՀՐԱՄԱՆ № 52Ա/1

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, նույն հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի և 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 | 1 | Ձեքրածկան կենսունակությունը և վարքագիծը գնահատող համակարգ | 70,832,000.00 | «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ | 01322649 | Երևան, Աջափնյակ, Մարգարյան Փ., Շ 23, Բն. 22 Բն, | 02.04.2026թ. | Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե | «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ, նույն հոդվածի 2-րդ մաս, | «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել էին անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ 2026 թվականի փետրվարի 18-ին գնահատող հանձնաժողովն արձանագրել էր, որ «Իմպեքսո» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.3-ով ներկայացվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղմամբ հայտարարագիրը ներկայացված է 2025 թվականին, սակայն պետք |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2 | Ջերրածկան պահպանման համակարգ՝ լրակազմով | 57,226,000.0 | | | | | | է ներկայացված լիներ 2026 թվականի համար, ինչպես նաև հայտով ներկայացվող առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի փաստաթղթում նույնպես առկա են եղել անհամապատասխանություններ, որոնք մանրամասն նկարագրված են 11.03.2026 թվականի արձանագրության մեջ: Գնահատող հանձնաժողովն 2026 թվականի մարտի 3-ին որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը: Այնուհետև՝ 02.04.2026 թվականի արձանագրությամբ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ նիստը կասեցնելուց հետո «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից համակարգի https://eauction.armeps.am/ միջոցով չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները՝ դրանով թույլ տալով գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում: |
| | 3 | Արդյունաբերական լվացքի մեքենա | 36,033,000.0 | | | | | | |

2026-04-13 18:33:44 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Կ. ՂԱՐԻԲՅԱՆ**

(պարտականությունները կատարող)